***ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ***
***ԼՂՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման բաժնի ավագ մասնագետ,***
***Արցախի պետական համալսարանի պատմահրավագիտության ֆակուլտետի դասախոս***

***ԱՐԵՎԻԿ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ***
***ԼՂՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման բաժնի մասնագետ***

# ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱՑՎԱԾ ԿԱՐԳ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԵՑԻԴԻՎԻ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



Ի. Դատական քննության արագացված կարգը քրեական դատավարության հատուկ ձև է, որը կիրառվում է քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված որոշակի հանգամանքների առկայության պարագայում: Դատական քննության արագացված կարգի կիրառման դատական պրակտիկայի և օրենսդրության ուսումնասիրության արդիականությունը հիմնավորվում է նրանով, որ ներկայումս ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի քննած քրեական գործերի **80 տոկոսով** կիրառվում է դատական քննության արագացված կարգ:

Դատական քննության արագացված կարգի էությունը կայանում է նրանում, որ դատարանն ամբաստանյալի (մեղադրյալի) կողմից իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում քրեական գործով ձեռք բերված ապացույցների ընդհանուր կարգով սահմանված հետազոտություն չի կատարում ու կարճ ժամկետում քննում և ըստ էության լուծում է քրեական գործը: Դատարանն արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավ-

ճիռ կայացնելիս նշանակում է պատիժ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը, իսկ եթե առավել խիստ պատժի երկու երրորդը փոքր է տվյալ հանցագործության համար նախատեսված առավել մեղմ պատժից՝ ապա առավել մեղմ պատիժը:

Առանձնահատկություն ունի նաև դատական քննության արագացված կարգի կիրառման արդյունքում կայացված դատավճռի բողոքարկումը. այն կարող է բողոքարկվել ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքով[1] նախատեսված կարգով, բացառությամբ նույն օրենսգրքի 413-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի, համաձայն որի՝ բողոքարկված դատական ակտը բեկանվում կամ փոփոխվում է, եթե թույլ է տրվել դատական սխալ, այն է՝ գործի փաստական հանգամանքների մասին դատական ակտում շարադրված դատարանի հետևությունները չեն համապատասխանում վերաքննիչ դատարանում հետազոտված ապացույցներին:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 389-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը կիրառում է դատական քննության արագացված կարգ, եթե՝ ի թիվս օրենսդրությամբ նախատեսված այլ պայմանների ***տուժողը չի առարկում արագացված կարգ կիրառելու դեմ:*** Այսինքն, տուժողի կարծիքի բացակայության պարագայում դատարանը չի կարող կիրառել դատական քննության արագացված կարգ:

ՀՀ վճռաբեկ դատարանը 26.03.2010թ. ՀՀՊՏ 2010.08.10/37(771).1 Հոդ.898.32 գործով կայացված որոշման[2] 19-րդ կետում պարզաբանում է՝ տուժողի համար իր գործի «արդարության բոլոր պահանջների պահպանմամբ» քննությունը, inter alia, ենթադրում է, որ (…) **դատարանը չի կարող անցնել դատական քննության արագացված կարգի՝ առանց այդ հարցի կապակցությամբ տուժողի դիրքորոշումը պարզելու (...):**

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 322-րդ հոդվածի համաձայն՝ դատական նիստին կանչված անձերից որևէ մեկի չներկայանալու … հետևանքով գործի քննությունը հնարավոր չլինելու դեպքում դատարանը հետաձգում է քննությունը և միջոցներ է ձեռնարկում չներկայացած անձանց ներկայությունն ապահովելու … համար: Նույն օրենսգրքի 317-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանց հարգելի պատճառների տուժողի՝ դատարան չներկայանալու դեպքում դատարանն իրավունք ունի նրան բերման ենթարկել, եթե դատարանի կարծիքով նրա ներկայությունն անհրաժեշտ է:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է փաստել, որ ԼՂՀ քրեական դատավարության օրենսդրությունը դատարանի համար ապահովում է բոլոր անհրաժեշտ պայմաններն ու հնարավորությունները տուժողի դիրքորոշումը պարզելու համար: Սակայն պրակտիկայում նկատվում է նաև հակառակ պատկերը: Օրինակ՝ թիվ ԸԻԴ/0119/01/15 գործով առկա չէ որևէ ապացույց, որը կհավաստի, որ դատարանը պարզել է դատաքննության արագացված կարգ կիրառելու վերաբերյալ տուժողի դիրքորոշումը. ավելին, տուժողը դատական նիստին չի ներկայացել: Նմանատիպ դատական պրակտիկա է առկա թիվ ԸԻԴ/0103/01/15, ԸԻԴ/0034/01/2016, ԸԻԴ/0024/01/16, ԸԻԴ/0016/01/16, ԸԻԴ/0083/01/15, ԸԻԴ/0115/01/15 գործերով:

Ուսումնասիրված բազմաթիվ գործերով տուժողին չի բացատրվում արագացված դատաքննության էությունը կամ բացատրվում է մասնակի՝ նրանց ձեռնտու լույսի ներքո: Օրինակ՝ երբ տուժողը հետաքրքրվում է, թե ինչ է լինելու արագացված դատաքննության դեպքում, նրան ասում են, որ այլևս չի հարցաքննվելու, ապացույցները կրկին չեն հետազոտվելու, սակայն ամբաստանյալների նկատմամբ առավել մեղմ պատիժ նշանակելու մասին որևէ մեկնաբանություն չի արվում: Սրանով խախտվում է օրենսդրությամբ ամրագրված՝ տուժողի կարծիքը հաշվի առնելու պահանջը, դարձնում այն ձևական, ինչն էլ դատավճիռը բեկանելու հիմք է:

II. ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասի հա-

մածայն՝ ամբաստանյալը (մեղադրյալը) դատական քննության արագացված կարգով անցկացնելու միջնորդություն կարող է ներկայացնել քրեական գործը դատարան ուղարկելու պահից ***մինչև դատաքննությունն սկսվելը:*** Նույն օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն՝ … ***դատաքննությունն սկսվում է մեղադրողի կողմից մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի հրապարակմամբ:***

Սակայն թիվ ԸԻԴ/0018/01/2016 գործով, 06.05.2016թ. դատական նիստի արձանագրության համաձայն, նախագահողը հայտարարել է, որ դատարանն անցնում է դատաքննության և դատախազին առաջարկել է հրապարակել մեղադրական եզրակացության եզրափակիչ մասը:

Մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի հրապարակումից հետո՝ այսինքն՝ գործով դատաքննությունն սկսվելուց հետո, պաշտպանը դատարանին ներկայացրել է ամբաստանյալի միջնորդությունը դատական քննության արագացված կարգ կիրառելու մասին, որը քննարկվել և բավարարվել է: Այնինչ օրենսդրության համաձայն՝ միջնորդությունը կարող է ներկայացվել միայն մինչև դատաքննությունն սկսվելը: Նմանատիպ դատական պրակտիկա է առկա նաև թիվ ԸԻԴ/0034/01/16, ԸԻԴ/0031/01/2016 գործերով:

III. Ինչ վերաբերում է **հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու դատական պրակտիկային,** ապա, այս ոլորտում ևս առկա են խնդիրներ: Մասնավորապես թիվ ԸԻԴ/0096/01/15 գործով ամբաստանյալը նախկինում դատապարտվել է 300.000 ՀՀ դրամ տուգանքի. ***25.09.2015թ.*** տուգանքն ամբողջությամբ վճարվել է: ԼՂՀ քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ դատվածությունը մարվում է ազատազրկումից ավելի մեղմ պատժի դատապարտված անձանց նկատմամբ՝ նշանակված պատիժը կրելուց մեկ տարի անցնելուց հետո: Այսինքն՝ տվյալ դեպքում ամբաստանյալի դատվածությունը պետք է մարեր ***26.09.2016թ.,*** սակայն ***25.12.2015թ.*** ամբաստանյալը կրկին դատապարտվել է՝ այս անգամ ԼՂՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ազատազրկման մեկ տարի ժամկետով, պատիժը պայմանականորեն չի կիրառվել: ԼՂՀ քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործությունների ռեցիդիվ է համարվում դիտավորությամբ հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտավորությամբ կատարված հանցանքի համար: ԼՂՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ են հանցանքը կատարելու ռեցիդիվը ...: Դատավճռում նշվել է, որ ամբաստանյալի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք դատարանը չի արձանագրում:

IV. ԼՂՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանցափորձի համար նախատեսված կանոնները չեն կիրառվում հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս:

ՀՀ վճռաբեկ դատարանը 01.11.2012թ. ՀՀՊՏ 2013.01.23/5(945).1 Հոդ.41.15 գործով կայացված որոշման[3] 14-րդ կետում պարզաբանում է՝ հանցագործությունների ռեցիդիվի առկայությունը բացառում է չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելու ընդհանուր կանոնների կիրառմամբ պատիժ նշանակելը. չավարտված հանցագործությունների համար պատիժ նշանակելու կանոնները չեն կիրառվում, եթե առկա է հանցագործությունների ռեցիդիվի որևէ տեսակ:

Այնինչ թիվ ԸԻԴ/0022/01/16 գործով առկա է ռեցիդիվ, սակայն պատիժը հաշվարկվել է չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելու կանոններով՝ մասնավորապես, ԼՂՀ քրեական օրենսգրքի 33-րդ և 183-րդ հոդվածներով:

V. Այժմ անդրադառնանք ԼՂՀ քրեական օրենսգրքով[4] նախատեսված հանցագործությունների ռեցիդիվի և ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դատական քննության արագացված կարգ կի-

րառելու պարագայում պատիժ նշանակելու կանոններին: Դրանցից յուրաքանչյուրի կիրառումն անձի համար տարբեր իրավական հետևանքներ է առաջացնում: Այսպես՝ ռեցիդիվի պարագայում, կախված դրա տեսակից, նախատեսվում է ԼՂՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի նվազագույն չափի պարտադիր խստացում (ռեցիդիվի դեպքում նշանակված պատիժը չի կարող պակաս լինել առավելագույն պատժի կեսից, վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ 2/3-ից, առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ 3/4-ից), իսկ արագացված դատաքննության դեպքում՝ կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի պարտադիր մեղմացում (նշանակված պատիժը չի կարող գերազանցել առավել խիստ պատժի 2/3-ը):

ՀՀ վճռաբեկ դատարանը 31.05.2014թ. ՀՀՊՏ 2014.10.01/52(1065).1 Հոդ.878.27 գործով կայացված որոշման[5] 14-15-րդ կետերում պարզաբանում է. « (…) ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում առկա են միևնույն հարաբերությունը կարգավորող երկու հատուկ նորմեր, որոնք նախատեսում են պատիժ նշանակելու տարբեր ընթացակարգ (...): (…) Վերոնշյալ նորմերի միջև առկա հակասությունը գործող օրենսդրության շրջանակներում ենթակա է լուծման ընդհանուր կոլիզիոն նորմերի կիրառմամբ»:

ԼՂՀ օրենսդրության շրջանակներում վերոնշյալ հակասության լուծումը տրվում է հետևյալ կոլիզիոն նորմերի կիրառման համատեքստում:

«Իրավական ակտերի մասին»[6] ԼՂՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Միևնույն մարմնի նոր ընդունած իրավական ակտը չպետք է հակասի նախկինում ընդունված և ուժի մեջ մտած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին: Միևնույն մարմնի ընդունած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտի նորմերը, (...)»:

ԼՂՀ քրեական օրենսգիրքն ընդունվել է 25.04.13թ., ուժի մեջ է մտել 01.07.2013թ., իսկ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգիրքը ընդունվել է 17.12.08թ., ուժի մեջ է մտել 01.01.2009թ.: Ուստի, համաձայն «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի, պետք է գործի ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտը՝ այս դեպքում ԼՂՀ քրեական դատավարության օրենսգիրքը:

Բացի այդ, «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կամ նույն իրավական ակտի տարբեր մասերի միջև հակասության դեպքում (...) ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հարաբերություններում պետք է կիրառեն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը»:

Վերոնշյալ կոլիզիոն նորմի շրջանակներում գնահատելով հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնները՝ պետք է փաստել, որ արագացված դատաքննության կանոններով պատիժ նշանակելու կարգը հանցանք կատարած անձանց համար ավելի նախընտրելի է ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կարգի համեմատությամբ, քանի որ օրենսդիրն ամբաստանյալի կողմից արագացված դատաքննություն կատարելուն համաձայնություն տալու և մեղսագրված արարքն ընդունելու պարագայում առանց որևէ սահմանափակումների պատժաչափի նշանակման հարցում արտոնյալ պայմաններ է նախատեսել:

Վերոնշյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ***ռեցիդիվի և արագացված դատաքննության*** դեպքում պատիժ նշանակելու կանոնների համատեղ կիրառման դեպքում վերջնական պատիժը երբեմն առավել մեղմից փոքր է ստացվում, և դատարանը կարող է նշանակել միայն առավել մեղմ պատիժը: Այլ խոսքով՝ հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոննե-

րի համատեղ կիրառումը բացառում է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների կիրառման հնարավորությունը, և դատարանը զրկվում է կոնկրետ դեպքում կատարված հանցագործության բնույթն ու վտանգավորությունը, հանցավորի անձը, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները գնահատելու և անձի նկատմամբ արդարացի պատիժ նշանակելու հնարավորությունից:

Բացի այդ, բացառվում է վերադաս դատական ատյանի կողմից ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 413-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքի կիրառման հնարավորությունը, որի համաձայն դատական ակտը բեկանվում կամ փոփոխվում է, եթե նշանակված պատիժը չի համապատասխանում կատարված հանցանքի ծանրությանը կամ ամբաստանյալի անձին: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը նշում է, որ գործի քննության արագացված կարգի կիրառման պայմաններում ***հանցագործությունների ռեցիդիվի և արագացված դատաքննության դեպքում պատիժ նշանակելու կանոնների միաժամանակյա կիրառությունն անթույլատրելի է:***

Այսինքն՝ ըստ վերոնշյալ որոշման՝ արագացված դատաքննության և ռեցիդիվի միաժամանակյա առկայության պարագայում պատիժ նշանակելիս կիրառվում են միայն արագացված դատաքննության կանոնները:

Թեև վերոնշյալ նախադեպային որոշումը կայացվել է առանձնապես վտանգավոր ռեցիդիվ պարունակող գործով, սակայն, սույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել ընդհանրապես ռեցիդիվի՝ ներառյալ դրա բոլոր տեսակների և արագացված դատաքննության հարաբերակցության վերաբերյալ: Բացի այդ, եթե առավել վտանգավոր ռեցիդիվի դեպքում կիրառվում է առավել մեղմ կարգավորում, այն է՝ արագացված դատաքննություն, ուստի նման կարգ պետք է կիրառվի նաև հասարակ և վտանգավոր ռեցիդիվների դեպքում:

Այնինչ ԼՂՀ դատական պրակտիկայում թիվ ԸԻԴ/0121/01/15 գործով կայացված 26.02.2016թ. դատավճռում նշված է. «քանի որ ԼՂՀ քրեական օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիան առավելագույն պատիժ է նախատեսում ազատազրկում մեկ տարի ժամկետով, այն որ արագացված կարգով դատական քննության արդյունքում նշանակվող պատիժը չի կարող գերազանցել առավել խիստ պատժի երկու երրորդը, իսկ ռեցիդիվի դեպքում չի կարող պակաս լինել առավելագույն պատժի կեսից, Դատարանը գտնում է, որ ամբաստանյալի նկատմամբ վերջինիս կատարած հանցագործությունների յուրաքանչյուր դրվագի համար նշանակվելիք պատիժը պետք է լինի ազատազրկման ձևով՝ ոչ պակաս 6 ամսից և ոչ ավել 8 ամսից»:

Նմանատիպ դատական պրակտիկա, երբ զուգահեռ կիրառվում են և' ռեցիդիվի, և' արագացված դատաքննության իրավակարգավորումները, առկա է թիվ ԸԻԴ/0022/01/16, ԸԻԴ/0080/01/15, ԸԻԴ/0109/01/15, ԸԻԴ/0120/01/15 գործերով:

Դատական նման սխալները, թերևս, կարելի է մեկնաբանել այն հանգամանքով, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, մասնագիտացված դատարաններ չեն գործում, մասնագիտացված չեն նաև դատավորները, ովքեր միաժամանակ քննում են և' քաղաքացիական, և' վարչական, և' քրեական գործեր:

---

*1. Ընդունվել է 17.12.2008թ.: Տե՛ս ԼՂՀՊՏ 2009.01.31/03(13):*

*2. Ընդունվել է 26.03.2010թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2010.08.10/37(771).1 Հոդ.898.32:*

*3. Ընդունվել է 01.11.2012թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2013.01.23/5(945).1 Հոդ.41.15:*

*4. Ընդունվել է 25.04.2013թ.: Տե՛ս ԼՂՀՊՏ 2013.06.21/12(231):*

*5. Ընդունվել է 31.05.2014թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2014.10.01/52(1065).1 Հոդ.878.27:*

*6.Ընդունվել է 16.04.2008թ.: Տե՛ս ԼՂՀՊՏ 2008.06.12/21(93):*